



ԱՄՍԱԹԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1939

ԹԻՒ 6



ԹԱԻՏԵՆԱԿԱՆ ՎԵՄ

Զեոփս մեջ ոչինչ կը բերեմ
Միմիայն Քու խաչիդ կը փարիմ:

ԿԱՐԵՒՈՐ ԿԷՏԵՐ ԹԵՐԹԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

1. Մեր նշանաբանը.— Էական կէտերու մէջ միութիւն, ոչ էական կէտերու մէջ ազատութիւն, իսկ ամեն բանի մէջ սէր:— *Օգոստինոս:*

2. Նպատակը.— Ծառայել Քրիստոսի սրբազան դասին: Պայտաւրի մօլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի նշանաբանները, Քրիստոսի ձրի վրկութիւնը բաշարաւ արեան շնորհիւ: Շեշել ապաշարութեան եւ վերսին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Ասուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Մղել վրկութեանը սրբազործումը կեանքի եւ այսպէս պատասխել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3. Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Սբ. Դրոց Ասուծմէ ներքնչեալ, անսխալալիս եւ հաւատքի ու կեանքի կանոնը ըլլալուն: (2) Ամենասուրբ Նրորոգութեան: (3) Քրիստոսի Ասուածութեան: (4) Սբ. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերսին Ծնունդի: (6) Սրբազործութեան եւ Սբ. Հոգիով մկրտումը կեանքի: (7) Մեր Տէրոջ կրկին, անձամբ վերադարձին: (8) Մեղեկներու յարութեան: (9) Ընդհանուր դաստասնի: (10) Սրբոց՝ Քրիստոսի հետ քաղաւորութեան: (11) Նրկինքի եւ դժոխքի: (12) Սասնային անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13) Արդարներուն համար յաւիտեան կեանքի, իսկ մեղաւորներուն համար՝ յաւիտեան կեանքի: (14) Սկիզբելոյ միասնակցութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4. Կը հրատարակուի իբր ոչ-յարանումնական անկախ կրօնական սմսայիք հայերէն եւ հայասառ քրեքէն լեզուներով:

5. Աշխարհիկ ծանուցումներ չեն ընդունուիր:

6. Յօդուածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ դուռէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն քերքին ուղղութիւնը եւ զրկումը յօդուածները կը ծառայեն հետապնդումը նպատակին:

7. Թերքիս սիւնակները տրամադրելի չեն վիճաբանական նիւթերու համար երէ անոնք պարզապէս վեներ յարուցանելու կը ծառայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8. Չհրատարակումը յօդուածներ չեն վերադարձուիր:

9. Վեց ամիսէն նուազ պայմանաւորով բաժանորդագրութիւնը չընդունուիր:


10. Սղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սիւնակը վարողին:

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Փառք եւ գոհունակութիւն Տէրոջը իր մեծ ողորմութեան համար, որ մեր խմբագիր ընկերը՝ ՆՊԲ. Կ. Թումանեան, յետ երկամսեայ հիւանդութենէ կատարելապէս ապաքինած է: Պահ մը իր կեանքը վտանգի տակ էր, սակայն Տէրոջ օթանդակութեամբ, վտանգաւոր եւ փափուք գործողութենէ մը հտք գլխոյն ոսկորին վրայ, այժմ աղէկցած, ի վիճակի է իր սովորական գործին վերականգնուելու եւ իր աշակցութիւնը բերելու թերթիս:

Խ. Ս.



ԱՄՍԱԹԵՐ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտօճաւեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. Թ. ՄԱՍԻՍԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբերք

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1939

ԹԻՒ 6

Անհրաժեշտ պէ՛տք մը

Ամէն ճշմարիտ և սրտցաւ հաւատացեալի մը ներքին ազազակն է հզօր կրօնական զարթնումի մը, որ տարածուի երկրին ամէն կողմը, ինչպէս անգլի կ'ունենար հին ատենները Արթնութիւն մը որ ուղղակի արդիւնքն ըլլայ Հոգւոյն Սրբոյ հզօր այցելութեան:

Ժամանակը հասած է դէպի յառաջ մեծ շարժումի մը թէ սոյնօրինակ շարժումի մը անհրաժեշտ պէտք կայ, յայտնի է չարին ամէն կողմ և ամէն մարդի մէջ կատարած խոչոր նուաճումներէն, որուն արդիւնքն է կրօնքի դէմ հանած անօրինակ հալածանքը Պէտք կայ, որովհետեւ եկեղեցիներ անուշ սակայն մահացու թմբիրի և անտարբերութեան մէջ են: Շատ մը անգիր բեմեր գրաւուած են այնպիսի պաշտօնեաներէ որոնք չեն գիտեր սրտի փոփոխութիւնը, զուրկ են Տէրոջը օծութենէ:

Թէ՛ հաւաքական և թէ անհատական կեանքերու մէջ, էական բան մը կը պակսի: Մենք չենք ինչպէս որ կ'ուզէինք ըլլալ, մանաւանդ չենք

ինչպէս որ մեր Տէրը կ'ուզէր որ ըլլայինք: Տիրող ընդհանուր զգոնութիւնը կ'զգացնէ անհրաժեշտ կարիքը կրակէ այցելութեան մը: Այսօր քրիստոնէութեան չափանիշը ամէն տեղ իջած է: Աստուծոյ զաւակներ կոչուածներուն կեանքին մէջ ազնուութիւններ կան. արդարեւ տխուր անստարան մը կը կազմէ անոնց վիճակը, Անոնք իրարու հետ խռով են, կազ ու կռիւի մէջ են, զիրար կը դատեն ու կը դատափետեն, իրարու կեանքն ու գործունէութիւնը կը խժրեն: Մէջերնին չարութիւն կայ, նախանձ կայ: Այսպիսի բաներ եպերելի են Աստուծոյ առջեւ: Ոմանց կեանքը միայն ձեւապաշտութիւնն է աստուածապաշտութեան, անոր զօրութիւնը ուրացող, կանոնի տերներն, առանց պտուղի, գետինը խափանող ծառեր: Իրերու այս ոգրալի կացութեան իբր ճար ու դարման անհրաժեշտօրէն պէտք է Պէնաէկոստեան մեծ այցելութիւն մը:

Այն երկիրները որոնց բերրութիւնը կ'ախտայ է իջնող անձրեւներէ, երբ այդ թանկագին անձրեւներ չի

գան երկար ատեն, անոնք կը դառնան անջողի անապատներու: Կ'սկսի ահաւոր երաշտ մը, և անով տառապանքը և նեղութիւնը ժողովուրդներուն: Մարդիկ կը մեռնին անսովորութեան: Ահա, այդպիսի հոգեւոր վիճակ մը գոյութիւն ունի այժմ: Ահաւոր երաշտ մը կայ, ոչ մէկ տեղ հոգեւոր անձրեւներու մասին կը լսուի, արթնութիւններ տեղի չեն ունենար, միայն լսուածը սա՛ է՝ թէ ամէն կողմ շորութիւն կայ և պէտք կայ հոգեւոր անձրեւներու նեղութիւն:

Սակայն եկեղեցիներու պատասխանատու պաշտօնեաներուն մտահոգութիւնը, անցեալի մէջ, մինչեւ իսկ մօտիկ անցեալի մէջ (1904 — 1912 տարիներուն մէջ Կիլիկիոյ շրջանը) տեղի ունեցած՝ արթնութիւնները չէ՝ տարիկայ ինքնին արդէն պէշ նշան մըն է — այլ սա՛ թէ՛ պէտք է եկեղեցի մը ունենայ լու կաղմակերպութիւն, ունենայ գեղեցիկ շէնք մը, հաւասարակշռուած պիւտճէ մը, խուռն բազմութիւն մը, զարգացած և հմուտ պաշտօնեայ մը, լաւ երգչախումբ մը, կանոնաւոր Կիր. Դպրոց և Զանգ Ընկերութիւն մը: Ահա իտէալ եկեղեցի մը այժմու մտատրպարով և ըմբռնողութեամբ:

Ասոնք լաւ են անշուշտ, սակայն ասոնք կենդանի եկեղեցիի մը նշաններ ըլլալէ հեռու են: Ասոնք կ'ենթադրեն լաւ «մեքանիզմ» մը: Վայրաշարժի մը «մեքանիզմ» կրնայ ըլլալ սքանչելի և կատարեալ, սակայն որքան ատեն որ զուրկ է շոգիէ՝ որ էական է ու անհրաժեշտ գալն շարժման մէջ զննելու, զուրկ է նաեւ օգտակարութենէ: Հոս է նաեւ էական պակասը եկեղեցիներու համար, այսինքն՝ վերին զօրութեան պակասը:

Մենք չենք խօսիր հոս շինծու և արուեստական արթնութիւններու մա-

սին, որոնք տեղի կ'ունենան բռնադրօսիկ կերպով աշտեղ կամ այնտեղ: Իբր արդիւնք անոնք գէլօ են և մարդ խաբելու միջոցներ: Մենք կը խօսինք այնպիսի արթնութեանց մասին որոնք տեղի կ'ունենան ուղղակի վերէն իջած Հոգիին կրակով: Յայնժամ պէտք չի տեսնուիր մարդիկը զօրելու, ստիպելու ապաշխարութեան: Մեղաւորներ ինքնաբերաբար, ներքին անդսպելի մղումէն կ'աղաղակեն փրկու թեան ի խընդիր:

Ճշմարիտ արթնութիւնը, սակայն, պատահամբ տեղի չունենար. անոր համար պատրաստուիլ և Աստուծոյ կատարելապէս վստահիլ պէտք է: Աւետարանիչ մը հրաւիրել, ժամանակ մը որոշել, այդ ուղղութեամբ ծանուցումներ ցրուել և կանոնաւոր ժողովներ սարքել ռաւական չեն արթնութեան մը գետին պատրաստելու: Արթնութիւններ, առանց բացառութեան, միշտ աղօթքի արդիւնքներ են, աղօթք մը որ Աստուծոյ հետ կը մարտնչի: Որովհետեւ միայն Տէրը փափաքուած արդիւնքը կրնայ տալ: Արթնութիւնը նախ պէտք է սկսի Աստուծոյ պաշտօնեային սրտին մէջ՝ Հոգւոյն Սըրբոյ հպումով, տեսիլքով մը՝ համայնքին և տեղւոյն արթնութեան կարիքին վրայ, և բոլոր փափաքով մը՝ որ այդ գաղղ, անհոգ անդամները եկեղեցւոյն՝ վերակենդանանան: Սոյն արթնութիւնը իր իսկ սրտին մէջ ունենալով Հոգւոյն Սրբոյ օծութեան ներքեւ տուած պատգամները՝ ժողովուրդին սրտին մէջ ալ պիտի յառաջացնեն հոգիներու հանդէպ ցաւ մը: Այդ պատգամները պիտի ծառայեն հերկելու խոստանացած սրտերը, գրգռելով զանոնք որոնք Սիօնի մէջ հանգիստ կը բնակին, որպէսզի անոնք ալ բռնկին այն բոցով որով ինքը բոցավառուած է:

Պարագաններ կան ուր աւելի զօ-

րուոր միջոցներու դիմում պէտք է ըլլայ, Կան պարագաներ երբ ջերմե-
ռանդ ազօթքին ընկերանալու է սիրու-
յօթար պանեղողութիւն: Հետեւաբար
ծովի և ազօթքի օրեր պիտի ըլլան,
երբեմն կէս գիշերներ, երբեմն ամբողջ
գիշեր մը ազօթքի յատկացնելու պէտք
պիտի զգացուի իրողութիւնը այն է՝

որ եթէ մեք կ'ուզենք ունենալ հզօր
արթնութիւն մը՝ տեւական արդիւն-
քով, պիտի ընենք ինչ որ պէտք է
ընել: Պէտք չէ մոռնալ թէ «Սիօն
ցաւ քաջածին պէս որդիներ ծնաւ»:
Յաջորդել պիտի տեսնենք թէ կարե-
ւի է այս արթնութիւնը այժմ:

Խ. Թ. Ս.

ԱՆԲԱՂԴԱՏԵԼԻ ՔՐԻՍՏՈՍԸ

Քսան դարեր առաջ՝ կ'ապրէր
Մէկը, որուն ծնունդը հրաշքով էր՝
իր ազգականները համբաւելով, և ազ-
դեցիկ չէին, ոչ այ բարձր ուսման տէր
մարդիկ էին: Ան երկար ճամբորդու-
թիւններ չըլաւ: Իր կեանքի գործու-
նէութիւնը սոսմանափակուած էր պըզ-
տիկ երկրամասի մը: Իր ծնունդը ահ
ու դողի մասնեց թագաւոր մը, երբ
տառնեկու տարեկան էր, պապանձե-
ցուց մեծ աստուածորանները, երբ
մեծցաւ իշխեց բնութեան տարերքին
վրայ: Բժշկեց հիւանդները տառնց որ
ակնկալէ վարձատրութիւն մը: Գիրք
մը չգրեց, սակայն իր վրայ գրուած
են անհամար գիրքեր: Չօրինեց երգ
մը, սակայն ինք եղած է նիւթ սրբա-
զան երաժշտութեան և օրհներգու-
թեան: Չվարեց բանակ մը, չգործա-
ծեց զէնք, սակայն նուաճեց երկիրներ,
և ունեցաւ բիւրաւոր կամաւոր զին-
ուորներ: Ան աստեղաբանին աստղն է,
երկրաբանին՝ ժայռը, կենդանաբանին՝
գառնուկն ու առիւծը: Հակառակորդ
թշնամիներու իրաւարարն է, մեղա-
ւորներուն Փրկիչը: Ամէն ազօթք առ
Աստուած կը մատուցուի իր անունով,
և չնորհք կը խնդրուի իր սիրոյն հա-
մար: Աշխարհի ամենտեղեւի գիտ-
նականներուն և իմաստուններուն ա-
նունները մոռցուած են, սակայն իր
անունը տարածուած է համայն աշխարհ:
Հերովդես չկրցաւ սպաննել զԱյն,

գերեզմանը չկրցաւ կտակել զինքը:
Բոլոր սուրբերու կողմէ պաշտուած,
գեւերէն խոստովանուած իր կենդա-
նի Քրիստոս է Ան:

Ան խոնարհեցաւ երկինքէն մին-
չեւ ախոռի մը մտուրը, Աստուծոյ ծո-
ցէն մինչեւ կոյսի մը գիրկը, աննահ-
ման հարստութենէ մինչեւ յետին չքա-
ւորութիւն... «Հուպո իր անձը ունայ-
նացուց, ծառայի կերպարանք տաճե-
լով, մարդոց նման եղաւ...» Հագաւ
մարդեղութիւն, որպէսզի մենք հագ-
նինք աստուածութիւնը: Որդի մար-
դոյ եղաւ Ան, որպէսզի Աստուծոյ որ-
դիներ ըլլանք մենք: Ան ինչ աստի-
ճան խոնարհեցաւ, գողափար մը կազ-
մելու համար պահ մը դառնանք իր
նախկին երկնային վիճակին, զոր սըր-
բազան գրիչներ կը նկարագրեն մեր
առջեւ, իր արեւոտ բլուրներով, թան-
կագին քարերէ պարիսպներով, մար-
գարտեայ դռներով, կենդանի գետով,
զանազան պտղատու ծառերով՝ հրեշ-
տակներով բիւրաւոր, և սուրբերով՝
ձեռքերին ունենալով մէյ մէկ քնար:
Տեղ մը ու՛ր մա՛ն, ցաւ, աղաղակ չկայ
և գերեզման գոյութիւն չունի: Ահա
այսպիսի երանելի փառաւոր վայր մը
ձգեց, որովհետեւ կը հետապնդէր մեծ
նպատակ մը. որ չէր կուսակցութիւն
կազմել, հանրային կարծիք ստեղծել
ի նպատակ իրեն: Ուրիշ աշխարհակալ-
ներու նման — Սէզար, Աղեքսանդր,

Նարոյէոն, Քրոմուէլ — բիրտ ուժը չընտրեց որպէս յենարան իրեն, այլ ունեցաւ ճամարսութիւնը իրեն հետ:

Ան չեկաւ մեզ մեր ցաւերէն փրկելու, քանզի ինքը «վշտերու տէր և ցաւերու տեղեակ» եղաւ, ոչ ալ ազատելու մեզ մեր փորձութիւններէ, զի ինքն ալ «փորձուեցաւ ամէն կերպով մեզի նման»: Ան չեկաւ միայն քարոզելու, չեկաւ մեզ արտաքուստ ճերմկցնելու, հապա մեզ ներքնապէս լուսլու և մաքրելու իր արիւնով, ոչ թէ մեզ նորոգելու հապա վերստին ստեղծելու համար:

Չեկաւ Ան հին հագուստի վրայ նոր կարկտան դնելու, քանզի Քրիստոնէութիւնը հակառակ է այդ սկզբունքին: Ան եկաւ որ քանդէ ստանային գործը և վերցնէ մեղքը որ կը նախատէ զԱստուած, որ կողոպտած է երկինքը, և դժոխքի վերածած զայն:

«Անոր համար Որդին յայտնուեցաւ, որ սատանային գործերը քակէ»:

«Ես եկայ որ կեանք ունենան, և ալ աւելի ունենան»:

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԱՆԱՌԱԿԻՆ ԱՌԱԿԸ

Աւետարան ըստ Ղուկասու ԺԾ. Գլխուն մէջ՝ երեք սքանչելի պատկերներ, եզակի ու ցցուն, մէկ շրջանակի մէջ ճարտարօրէն զետեղուած են: Այդ զըլուխը ուսումնասիրող հաւատացեալը պիտի հասկնայ թէ այլաբանօրէն պատմուած երբեմակ առականութեւ քարձրագոյն նպատակը հոգեւոր է:

Մէկը միւսը լրացնելով զերազանցող, այս առականութեւ մէջ կը տեսնենք Հօր Աստուծոյ սէրն ու գուրգուրանքը՝ առ կորուսեալ մարդիկ: Մեր Փրկիչը, Աստուծոյ դիրքը՝ հանդէպ մեղաւորին, սքանչելի կերպով, երեք տարբեր բայց նոյնանպատակ առականներով կը բացատրէ և վերջինով կը հասնի գաղաթնակէտին:

Անառակ որդւոյն առակը իր մէջ կը պարփակէ պատուական եւ գերազանց օրինակ մը. ան մարդկային կեանքէ առնուած Աստուծային զըլուխ գործոց մըն է: Սա Քրիստոսի Պսակն ու մարգարէք կոչուած է: Անառակին եզակի առակին մէջ իրարու յաջորդող չորս գլխաւոր գաղափարներ կան, ուսումնասիրութեան արժանի:

1. Մեղքը. Անառակը իր ազատ կամքով կը հեռանայ, հակառակ իր հօրը բաղձանքին՝ կը բաժնուի...

Հայրը քրիստոնէաւորել կերպով կը վարուի, իր բաժինն ալ կը տնօրինէ, չի զրկեր ժառանգութենէ, ոչ ալ դուռը կը փակէ:

Անառակը մեղքին գերին կը դառնայ: Հակառակ հօրը կամքին ու յորդորին՝ ան կը հեռանայ: Հայրը անոր ազատութիւնը կը յարգէ: Սակայն տըղան հօրը խօսքն ու խրատը կը մերժէ, կը հեռանայ տունէն հօրը ցաւն ու կսկիծը բաղձապատկելով:

Մեղքը որ տղուն մէջ կերպով մը բոյն դրած էր, բաժնեց զինք ընտանիքէն, աւրելով անոնց երջանկութիւնը...: Զաւակներու տէր եղող հաւատացեալ մը, Աստուած մի արտացէ, եթէ այսպիսի դառն փորձառութիւն մը ունենայ, այն տանն կ'զգայ թէ որչափ ծանր է. այսպիսի դէպք մը երեւակայել անգամ սարսափելի է ինքնին:

Հայրը տան մէջ գիշեր ցորեկ անհանգիստ է. աչքը ճամբաներուն կը սեւեռէ: Անմիջիպէս է, ան տակաւին կը սիրէ ու ամէն օր կ'սպասէ իր ապե-

բախտ զաւակը, տունը գտնուողները մոռցած է, անոր մտքին խորհուրդը կորսուողն է, ի՞նչու. վասնզի կը սիրեի Սիրելի և չի տառապիլ անկարելի է: Սիրողը կ'սպասէ իր սիրոյն առարկան: Հայրը սուգի մէջ է այս ակամայ կորուստին համար: Լաւ է սիրուիլ Աստուծոյ, սակայն լաւագոյնն է սիրել մարդիկը, ու մանաւանդ մեզաւորը, և ծառայել անոնց ի գին տմէն բանի, անոնց հոգիները փրկելու համար:

Որդին կը բաժնուի և կը հեռանայ, սակայն հայրը միտքին ապրելու համար անոր դարձին կ'սպասէ անհամբեր:

Որդին հօրը դէմ կը թիավարէ, կը մտնէ անոր շահածը, իսկ հայրը աղան սիրաշահելու համար կը ծախսէ նաեւ իր ունեցածը:

2. Թեուառութիւնը. Մեղքը անպատիւ չմնար, անոր արդիւնքը թշուառութիւն և վարձքն ու վախճանը մահ է: Անառակը չի կրցաւ իր ունեցածը իր տղատ և անկախ կամքով լաւագոյն կերպով գործածել: Քանզի ինք իր մէջ կորսուած էր: Մեղքը զինք տարաւ մինչեւ անսկզկութեան դուռը: Նախ բարոյապէս անանկացու, և հոսկ յետոյ սկսաւ ֆիզիքական թշուառութիւնը: Սովատանչ անառակը կ'սկսի խորհրդածել, ի՞նչ էի ես ինչ եղայ, հայրս ինձի ինչեր ըսաւ...: Սողեբուն հետ ընակիլ և նոյնիսկ զրկուիլ անոնց կերած եղջիւրէն...: Ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս...:

Թշուառութիւնը՝ անառակին մէջ գտնուող ազնուագոյնը երեւան հանելու միջոց մը եղաւ: Ո՛հ, որքան անառակներ կան որոնց սրտին մէջ ապաշխարանքի միտումը, սերմը կայ, որ պէս հաւատացեալ, անոնց փրկութեան համար զանազան կերպերով անոնց մօտենալու ենք:

Թշուառութիւնը անառակը զգաս-

տացուց, ցնցեց և անոր ներկայ ինկած վիճակը ցուցնելով հանդերձ հօրը տունը և անոր օրհնութիւնները վայելելու կերպն ու ձեւը մատնացոյց ըրաւ:

3. Ձղջում. Թշուառութեան մէջ ինքզինքին եկող անառակը ըսաւ. «Ելլեմ երթամ իմ հօրս և բռնմ Հայր մեզանչեցի երկինքի դէմ ու քու առջեղ»: Մեղայ հայր, ներէ ինձի, զիս վարձկան ծառաներուդ մէջ ընդունէ...:

Հայրը երբ հեռուէն տեսաւ, արդէն գութը շարժեցաւ, ուրախութեան արձունք թափեց:

Մեղաց արդիւնքը մարդուն Աստուծոյ հեռանալն է: Արարիչ և արարածին մէջ երբ մեղքի վարագոյրը կը քաշուի, մարդը անկումէ անկում, անդունդէ անդունդ կ'երթայ, կը թափուի և հանգիստ չի կրնար ընել: Գրիստոս այդ վարագոյրը վերցուց և մարդը հաշտեցուց իր իսկ մէջ, իր նմաններով և Աստուծոյ հետ: Մեղքը միշտ և տմէն պարագայի տակ Աստուծոյ դէմ թիավարել ըսել է:

Օրհնութեանց աղբիւրը մարդուն Աստուծոյ մօտենալն է. տառ համար հարկ է սակայն մեղքերէն փրկուիլ: Որչափ ցաւալի էր անառակին անկումը նոյնչափ և ալ աւելի ուրախալի է անոր վերականգնումը:

Անառակը ոչ միայն մեղաւոր ըլլալը զգաց, տեսաւ, այլ նաեւ իմաստութեամբ՝ զղջալով ապաշխարանքի պատրաստեցաւ. այլ խօսքով փրկութեան ճամբան ձեռք առաւ ու քայլեց...:

4. Ներում-թողութիւն. Անառակը կամովին հեռացած տունը կը վերադառնայ ինքնաբերաբար, խորհրդածութեամբ... կը զղջայ անցեալին մէջ տուած սխալ քայլին համար, անհնազանդութեան համար: Տուն հասնելով ներողութիւն կը խնդրէ:

Անկեղծ զջուրը ճշմարիտ թողու-

թեան արտառի է: Հօրը ներուժը անթերի էր, սէրը կատարեալ և ուրախութիւնը անսահման: Ահա այս է Աստուծոյ դիրքը բոլոր մեղաւորներուն հանդէպ:

Աստուած միշտ կը ցաւի ու կը տխրի ամէն անոնց համար որոնք իրենց ազատութիւնն ու անկախութիւնը իրենց իսկ օգտին համար չեն կըրնար գործածել: Աստուած կ'սպասէ որ բոլոր անառակները անկեղծ զղջումի զգացումով տուն վերադառնան: Փրկուի և իրենց համար պատրաստ եղող օրհնութիւնը վայելին:

Մենք Արարիչ Աստուծոյ գլուխ գործոցն ենք: Ան մեր հոգիներու վերջին ապաստանարանն է. մենք միմիայն Հօրը տան մէջ կրնանք երջանիկ ապրիլ ու վայելել կեանքը: Անոր հետ չփման գալով, հպումներ ու խորհրդակցութիւններ ունենալով պիտի կրնանք թէ՛ իր բազում օրհնութիւնները վայելել և թէ մարդոց օգտակար հանդիսանալ: Աստուած իր բարի զաւակներուն տունն է, անոնց հոգիներուն բնակարանը. Ան է բովանդակ մարդոց հոգիներու հայրենիքը:

Այն անառակը, մոլորեալը և կամ կորսուածը, որ հեռացած է իր հոգիին բուն հայրենիքէն, իր ստեղծիչին տունէն, մարդկային բնական մակարդակէն վար իջած խոզերու հետ կը բնակի կամովին: Այսպիսին մարդ կոչուելու արժանի չէ, այլ անառակ-մեղաւոր: Որոշ պէտք է հասկնանք թէ այսպիսիներ ոչ վախճուած են և ոչ ալ աքսորուած, այլ ընդհակառակը, ի-

րենց անկախ կամքովը, սողայելու կան արարքովը, կամովին հեռացած: Աստուած ամէն օր կ'սպասէ իրենց կը սիրէ զիրենք տեսլով անոնց մէջ գտնուող մեղքը: Իր տան դուռը միշտ բաց է. իր գիրկը բաց է ամէն անոնց համար որոնք արգելքը վերցնելով կը մօտենան Անոր:

Աստուծոյ զաւակները արքայութեան երկնային ուրախութեան մասնակից ըլլալու հրաւիրուած ըլլալով հանդերձ սրբազան պատակասութիւն մը ունին: Քրիստոնէութեան նպատակը միմիայն զԱստուած նշանորան ընտրել և զէպի Անոր վագել չէ, այլ Անոր հետ քալել է, գործել է: Ահա քրիստոնեային ամենամէծ առանձնաշնորհումը:

Մեր ամէնօրեայ կեանքով թող Քրիստոս արտայայտուի և այն ստեն Աստուած պիտի փառաւորուի: Թող մոլորեալը փարախ առաջնորդուի, կորսուածը գտնուի և անառակը տուն դառնայ: Սակայն ո՞վ պատրաստ է այս ուղղութեամբ ջանք թափելու, դրամ կամ ժամանակ տալու. — մէկ խօսքով ըսելու. «Ահա Տէր զիս ղրկէ» ծառայութեան դաշտը: Անկեղծ ու ալաւէր հաւատացեալը Աստուծոյ հետ միասին մեղաւոր մարդոց համար ոչ միայն կը տխրի այլեւ աղօթելով կը գործէ և միջոցներ կ'ստեղծէ անոնց փրկութեան համար: Անոր հետ միասեղ նաեւ կ'ուրախանայ փրկուողներուն համար, քանզի գիտէ թի ինք Աստուծոյ գործակիցն է:


ԱթեճԲ

Կ. Ս. Ֆաբեան

— Տօքթօր, ըսաւ հիւանդ մը, ես ի՞նչ պիտի ընեմ, բոլոր բարեկամներս ալ քաղաքէն դուրս կը գտնուին:

— Դուն բարեկամ մը ունիս որ երբեք քաղաքէն դուրս չէ, պատասխանեց Տօքթօրը, Ան լաւագոյն բարեկամն է աշխարհի վրայ և երկինքի մէջ:

ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ(*)



ՊԻԼԼԻ ՊՐԷՅ

Պիլլի Պրէյ ծնած է 1 Յունիս, 1794ին, Երկոսասան գլուխներ տնուն գիւղի մը մէջ, Անգլիա։ Ան կը սեռի մեքոսական րնտանիքէ մը որ մասնաւորաբար Ճօն Ուէսթլէյի Գօրնվօլի մէջ չրջուն աւետարանչութենէն յիշատակներ կը պահէր։ Այստեամենայնիւ իր երիտասարդութեան ատենը տրբածնեբու գէշ խումբերուն կ'ընկերանար, սոսկալի հայհոյիչ էր, յանդուգն և տրկածախնդիրներու պարագլուխ։

Իր յոռի վարմունքին համար թիթեղանալի մէջ ունեցած իր գործէն վաճառեցաւ, գերի էր գէշ ունակութիւններու, այնքան որ ամուսնութիւնն անգամ չկրցաւ բարեփոխել զինք։ Կինն ու զաւակները նեղ կուցութեան մէջ կը գտնուէին։ Իր անկումէ անկում ընթացած տտենն իսկ, իր խիղճը չէր դողարեր զինքը խորանելէ։ Ասկից զատ հանքի մէջ ամենօրեայ վտանգներն ալ իր վախերուն

վրայ կ'աւելնային և զինքը կը տագնապեցնէին։ Անգամ մը հանքի ձեղունին մէկ մասը փլաւ և ինք մագապուր ազատեցաւ ստոյգ մահէ մը։ Սարսըռագդեցիկ խորհուրդներ, երազներ կը ճնշէին իր վրան և ինքը կը դողար Աստուծոյ երեսէն յաւիտեանս բաժնուած ըլլալու մտածումով։ Նախախնամական բան մըն էր՝ որ այդ օրերը հանգիպեցաւ գրքոյկի մը, «Երկինքի եւ դժոխքի յայտնութիւններ» վերնագիրը կրող։ Անոր մէջ հաստատմը մը «Դժոխքի հեծեմանի կամ «Դաւապարտում հոգիի մը հառաչումներ»ը մէջ բերուած, զինքը շատ ապուրոած էր։ Սոյն հաստատմին մէջ երկու կորստեամ, հոգիներ զիրար կ'ամբաստանեն խելայեղօրէն։ Առաջինը կ'ըսէ.—

«Ես կրնամ շնորհակալ ըլլալ քեզմէ ասոր համար, որովհետեւ քու համոզումներուդ արդիւնքն է՝ որ զիս հոս բերաւ։ Դուն զիս հրապարեցիր, և թակարդի մէջ ձգեցիր։ Քու ազահութիւնդ, գողութիւնդ կեղեքումներդ, և աղքատը հարստահարելդ է որ զիս հոս բերաւ։ Եթէ լաւ օրինակ թողէիր առջեւս, փոխանակ գէշի, գիտեմ որ կրնայի երկինքի մէջ ըլլալ, և հոն պիտի ըլլայի այնքան երջանիկ որքան այժմ թշուառ եմ հոս, սակայն, ո՛հ, ինչ խղճալի եմ, իմ քեզի հետեւիլս այս խեղճութեան մատնեց զիս, և հոգիս կործանեց յաւիտեանս։ Ո՛հ, երանի թէ երեսդ տեսած չըլլայի, երանի թէ բնաւ ծնած չըլլայիր իմ հոգեւոյս այս անիրաւութիւնը ընելու համար»։ Որուն միւսը կը պատասխանէ.—

«Նոյնքան ես իրաւունք չունիմ քեզի դէմ մեղադիր ըլլալու։ Զե՛ս յիշեր այսինչ տտեն, այսինչ տեղ իմ խելքս դարձուցիր և համոզեցիր քեզի ընկերանալու երբ ես օրինաւոր կո-

չուսմիս կ'ուզէի հետեւիլ, Դուռն շեղեցուցիր զիս, հետեւաբար նոյնքան յանցաւոր ես դուռն որչափ ես եթէ ես ազան էի դուռն ալ հպարտ էիր եթէ դուռն ինձմէ սորվեցաւ ազահու-թիւնը, վստահ եմ որ հպարտութիւնը և արեքողութիւնը ես քեզմէ սորվեցայ եթէ գողութիւնը ինձմէ սորվեցար, դուռն ալ ինծի սորվեցուցիր ստեղծ և ծաղրելը բարինս Մինչեւ իսկ քու տեսքդ հոգիս կը վիրաւորէ, մտքիս մէջ թարմացնելով մեղքերս Գեղի հետ էի որ մեղանչեցի, եթէ չկրցայ խուսափիլ քեզմէ հոն աշխարհի վրայ, ո՛հ, երանի թէ հոս ըլլայի տաւանք քեզի»:

Այս հատուածին ընթերցումը շատ յարմար էր Պիլլիին համար, որովհետեւ ինքն ալ ունէր չար ընկերակցութիւն և շատ հեշտ էր զայն կիրարկել իր կեանքին Այդ երկու կորսուած հոգիներուն փոխադարձաբար զիրար պախարակելը, կարծես իր և չար ընկերներուն ապագայ մէկ պատկերը կը ներկայացնէր Պիլլիին կինը, որ ժամանակին Աստուծոյ հետ քալած էր, սակայն այժմ հոգեկան խղճալի վիճակի մէջ էր, իր կարգին կը վստահեցնէր իր ամուսինը — երբ աչքէ անցնէր իրենց տան թշուառ վիճակը և և կը մտածէր թէ ի՞նչ կրնային ըլլալ — թէ ո՛չ մէկ լեզու կրնայ պատմել այդ խորունկ խաղաղութիւնը զոր կը վայելէն ճշմարտապէս Տէրովը ծառայողներ:

Քանի մը օրեր Պիլլի մեղքի ծանր համոզման տակ էր: Երբ ընկերներուն կը միանար զինքը կ'այսպանէին պատահած անսովոր լուսութեան համար, որովհետեւ առաջ ան իր ընդոժին սրամտութիւնը կը գործածէր նուիրական նիւթերը ծաղրի առարկայ դարձնելու և զիրենք զուարճացնելով բարձրաձայն կը խնդացնէր: Այժմ այդ բո-

լորէն ոչ մէկը կար, ընդհանրապէս մեղաց բռնին տակ կը հառաչէր: Եւ երբ յանդիմանէին զինքը յուսահատական աղաղակներուն համար կ'ըսէր. «Եթէ դուք իմ տեղս ըլլայիք և զգայիք իմ ծանրութիւնս, առիժներու պէս պիտի գոչէիք, և ես պիտի շարունակեմ այս գոռուս մինչեւ որ ազատիմ այդ բռնէս»:

Գիշերը նեղիչ էր իրեն համար ինչպէս ցորեկը, այդ պատճառաւ փոխանակ քնանալու, գիշերները կ'անցընէր արտասուելով և հեծեծելով: Դաշտերու մէջ կը պտըտէր առանձինն, երբեմն կարդալով և երբեմն աղօթելով կ'անցնէր իր ժամանակը այդ քանի մը օրերուն մէջ:

Որոշած ըլլալով գտնել կենաց ճամբան գործի սկսուելու յայտարարելու անդով մը, փոխանակ երթալու գործի, առաւ իր Սբ. Գիւրքը և Ուէսլէյին երգարանը և քաշուեցաւ իր սենեակը ուր փոխնիփոխ կը կարդար գանձք և ինքզինքը աղօթքի կուտար: Քանի մը օրեր այսպէս շարունակեց, վերջապէս յոյս ծագեցաւ իր հոգեւոյն մէջ: Ահաւասիկ իր իսկ խօսքերը այդ մասին. — «Տէրովը ըսի, Դուռն ըսի, «Խնդրեցէք և պիտի տրուի ձեզի, փնտրեցէք պիտի գտնէք, գուռը զարկէք և պիտի բացուի ձեզի, և ես կը հաւատամ քու խօսքերուդ»: Վայրկենական Տէրը զիս այնքան ուրախացուց որ չեմ կրնար արտայայտել զգացածս: Ուրախութենէս կ'աղաղակէի: 1823ի Նոյեմբերին մէջն էր, սակայն ո՛ր օրն էր չեմ յիշեր, գիտեմ որ ամէն բան նոր կ'երեւնար ինծի — դաշտեր, անասուններ, ծառեր: Կը կարծէի նոր աշխարհի մը մէջ ըլլալ: Օրուան մեծ մասը կ'անցնէի Տէրը գովելով: Գտայ ընկերներս և պատմեցի անոնց ինչ որ Տէրը ըրաւ ինծի: Պատմեցի զայն որու որ հանդիպեցայ: Ո-

ԱՂՕԹՔԻՆ ՈՒԺԸ

Աղօթքը հազարումէկ օրհնութեանց միջոց մըն է։ Չեմ խօսիր ցուրտ անդօր աղօթքի մասին, հապա այն աղօթքի մասին որ կոտրած սրտէն կը բխի, Տէրոջը եղած հոգիէն ծագում կ'առնէ։

Աղօթքը բոցերուն ստատկութիւնը մարեց, առիւծներուն բերանը գոցեց, խռոված բազմութիւնը հանդարտեցուց, պատերազմները դադարեցուց, տարերքներու կատաղութիւնը իջեցուց, դեւերը հալածեց, հիւանդութիւնները բժշկեց, մահուան շղթաները կոտրեց, երկինքի դռները բացաւ։ Քաղաքները կործանումէ ազատեց, Արեգակն ու Լուսինը իրենց ճամբուն մէջ կոյրեցուց։ Դարձեալ կ'ըսեմ թէ ես չեմ խօսիր շրթունքներէն ելլող աղօթքի վրայ, այլ սրտին խորունկ տեղերէն բղխող։ Այսօրինակ աղօթքի նման հզօր բան մը չկայ, անոր բաղդատուող բան մը չկայ։ Գեղափայլ պատ-

մուճան հազած ինքնակալը այնքան գեղեցիկ չերեւար որքան ծուկի վրայ եկած աղօթող մը որ հաղորդ է Աստուծոյ և Անոր սրբութեան վայելութեան։ Ի՞նչ բարձր և փառաւոր է աղօթքի արտօնութիւնը որ մահկանացու էակ մը հանդարտ և անխռով, մեծ համարձակութեամբ կրնայ մօտենալ հզօր Թագաւոր թագաւորացին, երբ բիւրաւոր հրեշտակներ, Քերովքներ ու Սերովքներ կը շրջապատեն այդ գահը և Անոր մեծ վայելչութենէն երեսնին կը ծածկեն։ Ո՛հ, ասոր պէս պատիւ մը ո՛րեւէ արարածի մը տրուած չէ։ Երբ ճշմարիտ քրիստոնեայ մը ձեռքերը կը տարածէ առ Աստուած աղօթքին մէջ, կը մոռնայ թէ երկրի վրայ է այլ կը կարծէ երկինքի մէջ ըլլալ։ Միմիայն երկնաւոր բաներու վրայ կը խորհի, և բոլոր երկրաւոր իրեր կ'անշտանան։ Եթէ աղօթենք մենք ալ այդպէս Սատանան շուտով փախուստ պիտի տար, թէ որ դժոխքի դռները լայնատարած բացուէին, իսկոյն պիտի գոցուէին։

Յ. ՈՍԿԵՐԵՐԱՆ

Հելիոպոլիս Բաղեց Ա. ԱՅԴԱՐԵԱՆ

մանք չի հաւատացին, ըսին սպասենք վճարման օրին, խորհելով որ դրամը առած իս պէս գինետուն պիտի վազեմ։ Ոմանք ըսին թէ «խենթեցիր է», ըսել կ'ուզէին թէ խելօքցեր եմ։ Փառք Տիրոջ իր տուած ուրախութեան համար զոր այդ տատենէն ի վեր միշտ պահած եմ։ (Շար.)

(*) Եթէ Տէրը կամի այս թիւով կ'սկսինք կենսագրականներու շարքի մը, կարգ մը Արքեպիսկոպոս Գրիգորեան կեանքն ու գործը ծանօթացնելու մեր ընթերցողներուն։ Անոնց ընթերցումը հաճելի է, ներհանգիստ է եւ յուսով ենք որ նաեւ պիտի արժարժէ արքեպիսկոպոս փափաք մեր ընթերցողներուն մէջ։ Խ. Մ.

ԳԵՂԵՑԻԿ ԽՈՍՔՆԵՐ

Թող յոյսը ըլլայ մեր ծառան և հաւատքը մեր գաւազանը։

Հարստութիւնը եթէ կորսուի, բան մը կորսուած չէ, եթէ առողջութիւնը կորսուի, բան մը կորսուած է, երբ նկարագիրը կորսուի, ամէն բան կորսուած է։

Փոքրիկ մոլութեան՝ դուռդ մի բանար, որ մի գուցէ մեծ մոլութիւն մը մուտ գտնէ։



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ԱՐԻՒՆՈՎ ԳՆՈՒԱԾ

Տարիներ առաջ երբ Անգլիացի մը կը ճարձորդէր Ափրիկիոյ մէջ բեռնատար կառքով և ծառաներով, նըշմարեց որ տեղացի տղիկ մը սարսափահար երեւոյթով կը վազէր դէպի իրեն, բողբոջաբոյժն բռնուելու վախէն, որովհետեւ բազմաթիւ մարդոցմէ բողկացող խուժք մը գինք կը հետապնդէր Ան ուղղակի կը դիմէր ճերմակ մարդուն կռքին՝ հոն ապաստանելու Հազիւ թէ ինքը հասած էր, հասած էին նաև զինքը հետապնդողներ, որոնց կ'ընկերաւոր ցեղապետը։ Այս վերջինը կը ջանար հասնիլ և բռնել փախստական տղեկը։ «Թող տուր որ բռնեմ զինքը, որովհետեւ տղաս կախարդած է» կը պոռար ցեղապետը Անգլիացիին։

Սեղծ տեղացիք կը հաւատան չար ոգիներու, և անգութ կեղծ աստուածներու գոյութեան։ Ասոնցմէ շատեր երբեք չեն լսած ճշմարիտ Աստուծոյ մասին, որ մեզ աշխարհի սիրեց որ իր Միածին Որդին տուաւ մեզի համար մեռնելու։

Անգլիացին, անտարակոյս, աշխատեցաւ պաշտպանել խեղճ գերի տղան։ Երբ չաջողեցաւ, «Կ'ուզեմ ծախու առնել զայն, ո՛րքան կ'ուզես ա՜նոր համար» հարցուց ցեղապետին։

Ցեղապետը իր սաստիկ զայրոյթէն բորբոքած, «Ծաղրում չեմ ուզեր, ծախու չէ տալիս» պատասխանեց և նետ մը տեղաւորելով աղեղին վրայ վայ-

րագորէն արձակեց գերի տղեկին վրայ որ ահաբեկած Անգլիացիին ետին կը պահուէր։ Փայլակի արագութեամբ մը Անգլիացին իր թեւը երկարեցնելուն դէմ տղան պաշտպանուեւ և սուր նետը գամուեցաւ իր թեւին վրայ՝ բանալով խորունկ վէրք մը։ Երբ ցեղապետը տեսաւ պատահածը, անմիջապէս դէմքին գոյնը նետեց՝ վախալով գլխուն գտելիքէն։ Գերի մը ապանելի կարեւորութիւն չունի, որովհետեւ անոնց համար մէկուն հոգը չէ, սակայն ճերմակներէն մէկը վիրաւորել բոլորովին տարբեր խնդիր է, կը խորհէր իւրովի։ Կարելի է զօրք պիտի զրկեն զինքը պատմելու, իր հօտը զրաւելու, մինչեւ իսկ զինքը ապաննելու։

— Դրամ չուզեցիր էհ, արիւն կ'ուզէիր, հարցուց Անգլիացին։ Ահաւասիկ քու աշքերուդ առջեւ կը հոսի արիւնը, որուն համար հաշիւ պիտի տաս։

— Ո՛հ, ծովու զաւակ, ըսաւ ցեղապետը, սիրտս տխուր է, որովհետեւ միտքս քեզի մնասել չէր։

— Սակայն վիրաւորեցիր զիս, ըսաւ Անգլիացին, ես գնած եմ քու գերիդ իմ արիւնովս, զայն ինձի տուր և ա՜նա՛ քու և իմ միջեւ խաղաղութիւն պիտի ըլլայ։

Ցեղապետը ուրախ էր այսպէս աժան գնով ազատուելուն համար և անմիջապէս հաւանեցաւ։ Ասոր վրայ որդեկը, որուն անունն էր Կարա, մօտենալով իր նոր տիրոջ ոտքերը համբուրեց ու ըսաւ. «Կարա, զոր դուն ա-

րիւնովդ գնեցիր, յաւիտեանս քու գերիդ պիտի ըլլայ»:

— Ո՛հ, ոչ ըսաւ, իր ազատարարը: Դուն ազատեալ մըն ես. Անգլիացիք գերի չեն պահեր:

— Ազատ բացագանչեց տղան, որ չէր հաւատար այդպիսի բանի մը գոյութեան: Ուրեմն Կարա պիտի ծառայէ իր տիրոջ որովհետեւ դուն ծախուաւիր զինքը:

Այսպէս Աստուծոյ խօսքը կ'ըսէ մեզի թէ մենք չենք կրնար փրկուիլ ոսկիով և արծաթով այլ Քրիստոսի պատուական արիւնովը (Պետ. 1: 18, 19): Աստուծոյ այնքան մեծ յարգ կ'ընծայէ անոր, որովհետեւ «պատուական տարիւն կը կոչէ զայն: Եթէ վատահիս Քրիստոսի որպէս Փրկիչդ, դուն պիտի վայելես Քրիստոսի արեան պաշտպանութիւնը, ինչպէս Եզրիպոսի մէջ առջինները պաշտպանուեցան սատակիչին հարուածէն, անոր մէջէն անցած գիշերը»:

Կարա ծառայեց իր տիրոջ շատ տարիներ և ընդունեց նաեւ Յիսուսը իբր Փրկիչը: Ան յաճախ կը կըրկնէր սա՛ խօսքը. «Անգլիացի տէրս ազատեց զիս անգութ պետիս ձեռքէն, սակայն Տէր Յիսուս փրկեց զիս անգութ Սատանային ձեռքէն: Անգլիացի տէրս գնեց զիս իր արիւնովը այս աշխարհի համար, սակայն Տէր Յիսուս փրկեց զիս իր արիւնովը յաւիտեանական պատիժէն և երկինքի համար»:

Դուք, ով պատանիներ, թէպէտ չունիք անգութ տէր մը անոր ձեռքէն ազատուելու, սակայն պէտք ունիք Քրիստոսի արեամբ ձեր մեղքերէն փրկուելու:

Խ. Թ. Ս.



ԳԻՐՔԻ ՍԸ ՄԵՋ ԽԱՐՏՈՑ ՍԸ

Եւրոպացի մը եթովպացեաց կողմէ օր մը կը ձեռակալուի ու կը բանտարկուի: Բիչ ետքը իր բանտէն ազատ կ'արձակեն, սակայն ոտքին ծանր չղթայ մը կ'անցնեն որպէսզի չկարենայ խոյս առլ:

Ուրիշ եւրոպացի մը իմանալով իր վիճակը, արտօնութիւն կ'ստանայ իշխանութիւններէ զինքը տեսնելու: Իր այս այցելութեան ժամանակ գիրք մը կը նուիրէ բանտարկեալին: Բանտարկեալը ընթերցասէր մը չէր, հետեւաբար գիրքը կը նետէ մէկ կողմ վշտացած, «Անոր տեղը ուտելիքի և հագուելիքի պէտք ունիմ» կ'ըսէր իւրովի:

Դանի մը տարիներ կ'անցնին, և ինքը օր մը այս միօրինակ և կաշառաւորի կեանքէն ձանձրացած, իր ձանձրոյթը փարատելու համար գիրքը կ'առնէ կարդալու: Գիրքին կողքին մէջ կարծր առարկայ մը իր ուշադրութիւնը կը գրաւէ, և երբ կը բանայ կը գտնէ խորտոց մը:

Ի՞նչ ուրախութիւն, շատոնց կը փափաքէր այսպիսի գործիքի մը: Երբ բոլորովին առանձին կը մնայ, սոյն գործիքով կը կտրէ չղթան որ տարիներէ իվեր արգիլած էր իր ազատութիւնը: Արդէն ազատ էր, այժմ կը զղջար որ տարիներէ ի վեր իր ազատութեան միջոցը իր հետը ունեցած էր, սակայն չէր կրցած օգտագործել, դառնօրէն կը զղջար իր ազատութիւնը բերող գիրքը երեսի վրայ ձգած ըլլալուն համար:

Սիրելի ընթերցող, ունիս քեզ ալ չղթայող կապանքներ մեղքի, Աստուածաշունչ մատենունը կը պարունակէ իր մէջը փրկութեան միջոցը, և դուն ունենալով հանգերձ զայն չես գործածէր: Հոն կան նաեւ խոստումներ հա-

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— (Ելից 33:11) ին մէջ ըստուած է թէ «Տէրը կը խօսէր Մովսէսի հետ զէմ առ զէմ, ինչպէս մարդ մը իր բարեկամին հետ կը խօսի»։ Իսկ (Յովհ. 1: 8) ին մէջ «Մէկը երբեք զԱստուած տեսած չէ գրուած է. ինչպէս հաշտեցընել իրարու հակառակ վերի երկու համարները»։

Պատ.— Սբ. Գրոց մէջ տեսնուած հակասութիւններ առհասարակ մակերեսային են, այդ պատճառաւ ալ ուշադիր ուսումնասիրութիւն պէտք է։ Անուշադիւր է՝ որ երեւութական հակասութիւն մը կայ նաեւ վերելի յիշուած երկու համարներուն մէջ։ (Յովհ. 1:18) ին մէջ յիշուածը հաստատուած է այդ համարներով եւս (Մատթ. 11:27) ին մէջ մեր Տէրը կ'ըսէ թէ «Մէկը չհասնչուիր Հայրը բայց Որդին, այսինքն այն բացառակ իմաստով որ ինք կը ճանչնայ իր հայրը։ (1 Տիմ. 1:17 և 6:16) ին մէջ Պողոս առաքեալ հօր Աստուծոյ համար «Աննրեւոյթ» կը կոչէ «զոր մարդոցմէ մէկը չտեսաւ»։ Անշուշտ եթէ «աննրեւոյթ» է և «զոր մարդոցմէ մէկը չտեսաւ» Մովսէս ալ այդ մարդոց մէջը կը գտնուի։ Եւ յիշուելի է թէ Մովսէս Աստուծոյ երեսը տեսած ըլլաւ «Քու փառքը ինծի ցուցուր պիտի չըսէր, և այսօրինակ պահանջ մը առնիմաստ պիտի ըլլար։ «Քու փառքը ցուցուր» համազօր էր ըսելու «Քու երեսդ ինծի ցուցուր»։ Տէրը այսպէս հասկցաւ Մովսէսի միտքը, որովհետեւ

Աստուծոյ տեսնելու համար, երբ զոմնազան փորձութեան, նեղութեան և կոսակոծի չղթաներ անդամալուծած են զիրենք, կրնան գործածել հաւատքի ուժը և ազատիլ։

Տէրը հաւատարիմ է իր խոստումներուն մէջ։

Աղեփանդրիա

ՄԱՐԻ ՏԷՓՕԵԱՆ

ի պատասխան Մովսէսին այդ պահանջին՝ Տէրը կ'ըսէ. «Իմ երեսս չես կըրնար տեսնել... մարդ չկրնար տեսնել երեսս» (Ել. 33:18-22)։ Այսուամենայնիւ Մովսէս մէկը տեսաւ, և տեսածը (Թուոց 12:8) ին համեմատ «Տերոջը կերպարանքն էր»։ Ըստ (Փիլ. 2:6 և Կող. 1:15) ին Քրիստոս է «Աննրեւոյթ Աստուծոյ պատկերը» և «կերպարանքը» և Յիսուս շատ ձեւերով յայտնուեցաւ Հին Ուխտի մարդոց, Մովսէսին աւելի մօտէն և մտերմաբար։ Սոյն նիւթին վրայ (2 Օր. 4:12. 5:4) համարներն ալ լոյս կը սփռեն։ II.

«ԻՄ ՅԱԽՈՒՆ ՏՏ ՏՈՒՐ ԻՆՄԻ»

Մարդուն մէկը երազին մէջ խընդրեց հրեշտակապետն՝ որ իր ցաւը վերցնէ, և ուրիշ ինչ ցաւ որ կ'ուզէ տայ։ Հրեշտակապետը ցաւերուն սրտինը տարաւ մարդը և ըսաւ որ ինքը ընտրէ ցաւերէն մէկը որ աւելի լաւ կ'երեւի։ Մարդը ուրիշներու սոսկայի ցաւերը ոչքէ անցնելէ ետք՝ ըսաւ հրեշտակապետին, «Տեր իմ, ցաւս ես տուր ինծի»։ Եթէ զոն ալ դիտնայիր ուրիշներու ցաւերը՝ տրանջելէ պիտի դադրէիր, և քու ցաւդ պիտի կրէիր։

ՕՐ. ԲՕՔՖԷԼԼԷՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Զ ՈՒՆԻ

Անգամ մը, Ամերիկայի մի քանի տիկիներ, Օր. Բօքֆէլլերի (Ամերիկացի մեծահարուստ միլիոնատէրի աղջիկը) քովը եկան և ըսին իրեն. «Ըսէ՛ք մեզի, Օր. Բօքֆէլլեր, դուք որ միլիոնատէրի մը աղջիկն էք, սոքի խաղաղութիւն ունի՞ք»։ Օր. Բօքֆէլլեր պատասխանեց. «Դացէ՛ք և ինծի նախանձող բոլոր աղջիկներուն ըսէ՛ք որ Օր. Բօքֆէլլերը խաղաղութիւն չունի, և իրեն միլիոնները սրտի խաղաղութիւն չեն տար կոր իրեն»։

«Ինծի եկէ՛ք... և ես ձեզի խաղաղութիւն կուտամ» — Յիսուս։

Թագադրու օլունամար իմսէ

«Օ տախի կիւճէնիպ իչէրի կիրմէք իսթէմէտի»։ Պու աճաիպ նագլիյէթ-տէ էն մուհիմ շախս, քէնտի հալընտան նախօշնուտ, հիսսէսինէ տիւշէնի ալտ-րադ էվտէն վէ վաթանընտան ուզադ-լաշարադ սափմըջ օլան օղուլ տըր։ Փէտէրինտէն, աիլէ խալզընտան ուզադ պիր էօմր քէնտինի վէրիշան վէ միւզ-մանալ էտիպ խէճալէթէ կիրիթթար էթտի, պատէհու. փէշմանիյէթ վէ թէվ-պէյէ վէ կէրի էվէ ալտէթէ սէվզ էթ-տի Պէօլէ պիր միւսուրիֆ օղուլ իշիւն փէտէրանէ մուհապպէթ՝ ունուտուլմա-սը միւմքինսիդ խօշամէտի հազըրլաշար պիր զիյաֆէթ թէրթիպ էթտի։ Ֆա-զաթ պու նագլիյէթտէ րապպըմըզ Յի-սուս Բրիստոս պէօլիւք պիրատէրին կէօսթէրտիյի րուհ միւնասիպէթիյէ պաշադ մուհիմ պիր հագիդաթ տա էօյ-րէթմէք իսթէտի, հօգ իսէ պու պէօ-յիւք պիրատէրին նագլիյէթտէ կէօրիւլ-մէսի ֆիզուլի պիր շէյ օլուր իտի էֆէնտիմիդ տնլաթմադ իսթէտի քի կիւնահ իքի ճինս տիր։

Միւսուրիֆ օղուլըն վագաաւընտա կիւնահ պիր քհնալուզ հալինտէ պէ-յան էտիլիր, պէօլիւք պիրատէրին վագաաւընտա իսէ պիր մէյլ հալինտէ իզհար էտիլիր։ կիւնահ ամէլտէն զի-յաւտէ պիր շէյ տիր։ օ առէմին վար-լըղընտա տէրինճէ քէօքլէշմիշ տիր։ կիւնահ հիսսիյաթ վէարզուլարտա պօ-զուզըդ մէյտանա կէթիրմիշ տիր, օ տախիլի հալաթըն էօզիւնէ կէշմիշ պիր զիշր տիր։

Թագադրու օլունամայան քիմսէտէ կէօրիւլէն պիր ալիւմէք զագապ տըր։ «Օ կիւճէնիպ իչէրի կիրմէք իսթէ-մէտի»։ Պիր քիմսէ խալիճի թալր ու հարէքէթինէ տիգգաթ իլէ էյի կէօ-

րիւնէպիլիր իքէն, տէրուէն գալտա-յան տիւշէնիշանա մալիք պիրիսի օ-լապիլիր։ Նէ չօգ տէֆալար զագա-լուհու խրիսթիան հալաթըն պօզմուշ տըր։ Մուսէսին պու կիւնահը իտի քի քէնտինի վատ օլունան տիյարա կիր-մէքտէն մէն էթտի։ Պիր ալֆա վա-իզին պիրի վալընտա պաղը տօզա-նըզլը վէ սէրթ սէօզլէր սէօլլէտիյին-տէն տօլալը, ճէմաթընտան պիրիսի, քէնտինին մուհապպէթտէն թէշլիդ օ-լունարադ սէօլլէմէյօր իտիյինի զիքը էթտիյինտէ, օնու հիլմիյէթլէ գապուլ էտէճէք հէրտէ պիւսպիլ իին քէնտի քէնտինի զալպ էյլէտի Թագադրու օլուն-մամըջ պու վալիք քէնտի թէէսիրինի վէ Ալլահըն իշինի պօզմըջ օլտու։

Տիկէր պիր ալիւմէք մարթաւանադ տըր։ «Իշթէ պունճա սէնէտէն պէրու սանա խըտմէթ էտիյօրու վէ պիր վագըթ սէնին էմրինէ մուխտլէֆէթ էթմէտիմ վէ պիր քէրրէ տօսթլա-րմ իլէ շատ օլմագ իշիւն պունա պիր օղլագ պիլէ վէրմէտին»։ Մըրըլտան-մագ կիւնահը, կիւնահը պիր մէյլտէն նէշէթ էտէր։ Լատա քիթապընտա կէօ-րիյօրու քի Խարայէլ գալմը օն տէֆա մըրըլտանտը, վէ օ հօլ իլէ Նէհօլանըն զագապընը իւզէրինէ տալէթ էթտի։ Պիր խրիսթիանըն նախալի չօգ տէֆա լաթիֆ վէ իօշ օլմագտան չօգ ուզագ տըր։ Ահվալ չէթին, էթրաֆընտաքի-լէր իշթիրաքսըզ վէ սօղուզ օլապի-լիրլէր, պէօլէ վէմանտա տըր քի իւ-զէրիմիդտէ իշլէյէն Ալլահըն ազիմ լաթիֆընըն պիւրհանլարը կէօրիւլ-մէլի տիր։ Թագադրու օլունամըջ քիմսէ շիքեայէթ րուհունտան ազատ օլմուշ օլուպ հէր չէտէ գալտաթ էթմէնին սըրընըն էօյրլէմիշ օլուր (Փիլ. 4.11)։

«Մուհապպէթ հէր շէյէ թէհամմիւլ է-տէր»:

Թագաւոր օլունմամազլըղըն սիկեր ալիմէքի գրգգանըլըզ սրտ: Պու կիւնուհ «հաւլիէ կիպի շէֆգաթսըզ տըր»: «է-յէր զիյաֆէթէ լայըզ պիր քիմսէ վար իսէ օ տու պէն իմ, մամու մալընը ֆու-հիշէլէր իլէ եէյէն վէ ֆումիլեանըն իս-միսի մալումաթ էտէն պու օղլունա պէսի պուզաղըրը պոզաղլուտը Պէն ի-սէ տօսթլուրմիլէ շուտ օլմագլըզտան մահրում գալտըմ Պունա թէհամմիւլ էտլմէմ վէ պու զիյաֆէթէ ի:թիրաք էտլմէմ» տէտի պէսիլք օղլուլ, վէ իշ-թիրաք էթմէտի Օ՝, հասէտին էօնիւն-տէ քիմ տուրապիլիր Թագաւոր էտիլ-մէմիշ քիմսէտէ հասէտ րուհու վարտըր: Տիկեր պիր ալամէք աֆիլ եսեմեմէ րու-հու շուր էվէ սաղ սէլիմ տէօնէն պու կէնք քէնտին պիրատէրի տէյիլ մի-իտի իրիսթիյան րուհունա ետգըշ-մագմը իտիքի օնա խօշամէտի էտէ իտի Միւսաֆիրլէրի գապուլ էտիպ, զիյաֆէթի հազըրլայան պիզգաթ պէօ-յիւք պիրատէր քէնտիսի օլմալը տէյիլ մի իտի Ֆուգաթ պիրատէրունէ օլմա-յան պու րուհ քէնտին խարիճտէ պրագաւր Պիրատէրինէ գարըշ աֆիլ է-տէմէյէն պիր րուհ թաշըյան քիմսէ խրիսթիան գալումազ, հաթթա թա-շընըլուն նախօշ վէ աճը հիսս իսպաթ տըրքի գալպ սոզլուլ մէվգիտէ տէ-յիլ տիր:

Ալլահըն մերհամէքի.— «Փէտէրի տիշարըյա չըգըզ անա րէճա էթտի»: Ազապ, աճը հիսս գափուլըն հէմանտի-շարընտա հիւքմ էթմէքտէ օլտըգճա՝ մերհամէք զիյաֆէթտէ գալըղուսըզ օթու-րամազ իտի Միւսրիւֆ օղլուլըն ալ-տէթի իշիւն թէրթիպլէր եափան Ալ-լահ, միւսքիւսիզ իտի քի տէրուտէ

կիւնու թաշըյան պէօյիւք օղլուլ իշիւն լազըմ օլուն թէրթիպի տախի տիւշիւն-մէմիշ օլա իտի րուհիւլ Գուտս՝ գալպ-տէ հիւքմ էտէն պոզուգ թապիւթը նէ՝ լաթիֆ պիր թարգտու մէյատնա չըգարըյօր վէ նէ զէման պի ի պու նուրա իթաաթ էտէր իսէ, օնու րուհիւլ Գուտս խէլուտ գըլաղուզլուր:

Ալլահըն մուհապպէքի.— «էյ օ-ղլուլ սէն տաիմա պէնիմ իլէ պէրտպէր սին»: Ալլահ իլէ օլուն ալագա տալա գըրըլմամալըլ էյէր սէն նախօշ պիր հիսս թաշըյօր իսէն պիրատէրինէ տօղ-րու, պու շէյ՝ Անըն իլէ սէնին տրան-տու օլան ալագանըն գաթ էտիլմէ-սինէ սէպէպ օղլուր: Մուհապպէթ գըզ-գանմազ, զուրուր վէ աճը հիսս թա-շըմազ, մուհապպէք հասէս երմէպ»: Ալլահ թարաֆընտան աֆիլ օլունմագ քեոֆի տէյիլ տիր, փաքլէյէն գանա ինթիյաճըմըզ վար տըր: Տաիմա տէր խաթր էտէլիմ քի Ալլահ իլէ օլուն ալա-գա եալընըզ իման վէ իթաաթ իլէ սապիթ գըլընապիլիր:

Ալլահըն լուքմու.— «Պէնիմ օլա-նըն ճիւմէսի սէնին տիր»: Միրաս սի-զին տիր Նէրէտէ մուհապպէթ հիւքմ էտիյօր իսէ օրտտա էմվալ թագաիմինէ ինթիյաճ եօգ տըր: Մուգատտէսլէր մէլէքիւթիւ միրաս ալումազլուր Պու նազլիյէթ, տէհէթլի պիր իսթուր ի-լէ ալանսըզ վէ գըսսոմա խիթամա կէլիյօր թէվպէքուր միւսրիւֆ օղլուլ ալա խիւթ կիյինմիշ օլտագ իշէրի-տէ զիյաֆէթտէ, պէօյիւք պիրատէր էվին խարիճինտէ: «Օ տախի կիւճէնիպ իշէրի կիրմէք իսթմէտի»: Վէ գայտ, «Օ իշէրի կէթմէտի» տէյիպ օրատա տուրույօր:

Ճ. ԹՈՎՄԱՍ

ՓԱՐԼԱՅԵՆԸ, ԳԱՐԱՆԸԴ ՏԻՒՆԵԱՏԱ ՓԱՐԼԱՅԵՆԸ

«Ազրլլըլար Սեմանըն Գուրը կիպի վե չօղլարը սալահա իրեաս հեհնլեւ երլսըզլար կիպի հպեօ իւլ ապաս զիյա-սար օլանագլար սըր: Դան. 12:3:

Պու քէլում իխթիյար Դանիէլին սօն կիւնլէրինտէ հափաղը չէհատէթի տիր: Տիւնեա իւզէրինտէ աէրին թէճ-րիւպէ ի չախսիլէյէ մալիք օլան պիր զաթ իտիւ Դանիէլ տահա կէնճ իքէն էսիր հալինտէ Բարեւոնա կէօթիւրիւ-լիւր, թագրիպէն 20 հաշընտա իքէն էկէր օլ զէմանտա պիր քիմսէ աէմիշ օլտա իտիքի, պու էսիր իպրոնի կէնճ քէնտի զէմանընտա հաշայան էն մէշ-հուր տաէմլէրտէն տահա ալի պիր մէր-թէպէյէ եէթիշէճէք տիր, հիշ պիր քիմսէ տնա ինանմայաճագ իտի 0, Նարուզդոնոսոր, Բաղդասար, Դարեհ վէ ճիւմլէ բրէնալէր վէ իւլէմա հու-զուրընտա նուր կիպի փարլատը: Պու կիւն նիշէլէր պիզէ քէնտի իշ թարլա-լարընըն նէ գատար կիւն վէ փարլա-մասը միւշքիւլ օլան եէրտէ պուլուն-տուզլարընը սէօյլէյօրլար Լաքին Դա-նիէլին իշ թարլատընտ պագ, օ տէյիլ հալընըզ էսիր իտի, իլլա եէհուտիլէր-տէն իքրահ էտէն պիր միլլէթ էլինէ վէ տիյարա տիւշտիւ: Լիսանլարընը պիլմէզ վէ փութփէրէսթ պիր գալմ տրասընտա իքէն եինէտէ Ալլահ իշիւն հաշումաղա վէ փարլումաղա պաշլատը: Դանիէլ քէնտի կէնճլիլինի Ալլահա թէսլիմ էտիպ՝ զէմինի հօճուլուզը խիթամա կէլէնէ գատար Անա սատըզ գալար: Տիգգաթ էտէլիմ քի պու տիւն-ետա տէրին թէէսիր պըրազան վէ գուլվէթլէ փարլայան գաթլար, տիւն-ետնըն գարանըզ տարընտա հաշումըշ-տըրլար: Յովսէփի պագ: 0 պիր էսիր հալինտէ սաթըլըպ Մըսար կէօթիւրիւ-տիւ: Դանիէլ կիպի օ տախի քէնտի Ալլահընը էսարէթ տիյարընա պէրա-

պէր կէօթիւրտիւ, վէ նիհայէթէ գա-տար սատըզ գալար, Բապ պա տախի հէր հալու քէնթիլէթտէ վէ հէր եէրտէ Յովսէփի իլէ իտի:

Մովսէսի պագ: Պու զաթ տախի քէնտի ուրգատընը Մըսարն միւզէյէն սէրալլարընա չէվիրտի վէ թաշգիր օլունան քէնտի գալմը իլէ պէրապէյէ էզիլէթ չէքմէյի թէրճի էյլէտի: Մով-սէս գատար՝ կիւն տնվալ իշինտէ պու-լունան չօգ ազ տըրլաքին եինէտէ գա-լիպ օլուպ օլ փութփէրէսթ ալէմտէ փարլատը:

Յղիայա պագալրմ: Անըն տարը պիզիմքինտէն չօգ զիյատէ գարանըզ իտի: Ախապ վէ գարըսը վէ պիւթիւն սէրայ Ալլահա իպտաէթ էթմէյի թէրք էթմիշ իտիլէր: պէօյլէ պիր սըրտաա Յղիա հագիպոթ իշիւն սապիթ տու-րաթագ փարլատը: Անըն իսմի Ալլա-հըն քէլամընտա հոսըլ զիյա վէրիլ:

Պողոսա պագալրմ: Պու զաթ տա-խի իլք միսիօնէր հալինտէ, կէթտիլի հէր պիր տիյարտա ճէսուրանէ չէհա-տէթ էտիպ՝ Բրիստոսըն խաշ իւզէրին-տէ պէշէրիլէթ իշիւն օլան էօյիւմ վէ քէֆարէթինի վէ Անա օլան իման վա-սիթասըյլէ խէլտաա վէ էպէտի հայա-թա մալիք օլմագլըզը վագ էտէր վէ հայաթը իլէ տախի չէհատէթ վէ վա-զընը թաստիգ էտէն մուգատտէսէօմրիւ իլէ փարլար վէ չօգլար Յէլասքեա-րա գըլաղուզլար իտի Պէօյլէճէ ճիւմ-լէմիզ փարլումագ իշիւն հատէթ չէ-քէրիզ: եինէտէ տիւնետաա փարլայան-լար չօգ ազ տըրլար: Պէօյլէճէ հէփ դա-լիպ օլուպ փարլայանլար միւքեաֆ-թը ալապիլիր: Անըն միւքեաֆ-թը զանի տիր:

ԱԼԺՌՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ՏՈՒԱ ՀՈՒՋՈՒՐՆԵՍԱ

Ալլահըն հուզուրընտա քիւշիւք պիր մասոււմ կիպի եախօտ տա պիր տիւննճի կիպի տուր: Պիր տիւննճի տիւննճիւր քի տաւմէր քէնտինէ պիր շէյ վէրմէյէ մէճպուր տէյիւտիւրէր: Երէտէ տէ օ իսթէր վէ տլմաք իշիւն պէքէր էմին օլ քի ինթիյաճըյըն տէրէճէսինէ կէօրէ, տն պէ տն հէր նէ լազըմ իսէ Օ թէտարիք էաէճէք, հաթթա լազըմընտան ֆազլա շէյէր վէրէճէք: Մուզատտէրին հիմայէսինտէ էմնիյէթ իլէ հաշա, սէն քէնտինի նէ տէրէճէ հիշ, լաշէյ հիսս էտէր իսէն օ տէրէճէ Ալլահըն մէրհամէթ վէ շէֆաթթընա հազգ քէսպ էտէրսին: Անճաք քի տուան կէրմի վէ հէրաթէթլի օլսուն: Ֆուզարանըն տուտտան պաշգա պիր շէյի գալմամըյ տըր, ֆազաթ թէվազու վէ ֆէրեստ իլէ օլան տուա Ալլահըն հուզուրընա չըգար վէ փէտէրանէ մուհապպէթ օ տուայը տիւնէր: Բէնտինի իւճրէթլի պիր խըտմէթճի կիպի կէօզէթ, էօյլէ պիրինէ Ալլահ կիւնին (հայաթըն) սօնուէտա իւճ-

Իմաի ազըլը օլուպ՝ Ալլահ իշիւն վէ էպէտիէթ իշիւն հաշայըպ փարլալայլըմ. զիրա, պու սիւնեասա փս բլայան օլ պիր սիւնեասա սախի էպէսէն փարլայանագ սր:

Պու նէլիլ խըսմէք օլալըմ սախի,
Նուր կեօնէք, նուր կեօնէք.
Թանլարըմըգա նէվնէք սկիւթիւլիմ,
Նուր կեօնէք, նուր կեօնէք.

րէթ վաա էթմիշտիր: Անըն հիփ է վամիրինէ քէտին ին իսթէսինի Եօլ վէ թարգաա իթաթթա քէտինի հազըրլա: Օլաքի պու էմրլէր տօղրուտան ֆէնտինտէն կէլմէյ (շիւհէսիպ ֆէնտինին սէսինի իշիւթմէք չօգ թաթլը տըր) լաքին էլիւլէրի վաարթաթըլէ տնլէրի կէօնտէրէպիլիւր: Պու էլիւլէր՝ սէնտէն իւսթիւն, սունա միւսապի, սէնտէն էնկին քիմսէլէր, պազէն տէ տիւննճիւրին օլապիլիւր: Օնլարտան հէր պիրիսի (քէնտիւլէրին իապէրի օլմայարագ) սէնին մուզատտէս օլման իշիւն կէօնտէրիլէն քիմսէլէր տիրլէր: Օնլարտան պիրիսի սէնտէն հիւրիւլէթինի զապ էտէրէք պու վազիֆէյի էտէր, տիկէրի զուրուրընը զըրարագ, պաշգա պիրի՝ կէվշէքիլինէ պիր իւզէնկի հալլինտէ իսթիմալ էտիւլէրէք: Պու շէյէրի տնլէրտէն հէր պիրի քէնտինէ խօշ կէլէն հօլտա հափաճագ, պազէն գապաճաթընա, պազէն ֆէնա պիր հօլտա, պազէն տէ սէնին իշիւն տայանըլմաթ շէթին պիր թարիգ իլէ... ֆազաթ պու շէյէրին նէ էհէմմիլէթի վար մատէմ քի հափաթըն հէր շէյ վէ շէքտիյին հէր գահմէթ Ալլահըն իրասէթի սիր տէյի հիսս էտիյօրսուն:

Անլաաթըն վէ իգթիտարըյն տաիրէսինտէ իւզէրինէ տիւննճիւր վազիֆէյէ էյի իճրա էթ: Պազէն Ալլահտան սիւալ էթ «Եա Բապպ հայաթըմ սէնի իգնա էտիյօր մը», պատէհու հօրղուլլուլա, հիսս էթտիյին օսանճըլա վէ զըտաիլէթէրազմէն սօնտէք վէ սաաթըգանէ իշիւնտէ տէվում էթ: Անտէն սօնրա նաաիպին մէտն հա թազպիհ տէ օլտա, էյ սաաթըգ զուլ, սօնուէտա սէլամէթէ մալիք օլաճազըն:

ԵՐԷՑ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷ

Տեղական մամուլը արձագանգ կ'ըլլայ լուրի մը, ըստ որում Գերմանիոյ բրոքսկանտինախարար Տոքթ. Կէօպէլս, որ վերջերս Եգիպտոս այցելեց, յայտարարած է թէ 50 հազար Նացիներ Մահմէտական կրօնքը պիտի ընդգրկեն Տոքթ. Կէօպէլս նկատել է թէ Նացի հաւատքը և Մահմէտականութիւնը իրենց խոշոր գիծերուն մէջ նոյնն են։ Կարգադրուած է որ՝ որպէս հաստատութիւն իրենց դաւանափոխութեան՝ պիտի երթան տեւեւ Երուսաղէմի Միւֆթին և Անկէց եաքը 50 հազար Նացիներ պիտի ցրուին արաբական երկիրներու մէջ Նացի բրոքսկանտը ընելու, և ցոյց տալու Հիթլէրը որպէս Պաշտպանը Իսլամութեան։ Կ'երեւի մրցելու Մուսոլինիի հետ որ իբր այդ հռչակած էր ինքզինքը։

*. Այժմ որ Ճաքոն գրաւած է Չինաստանին մէկ կարեւոր մասը Ճաքոնի Պուտտայական Դաշնակցութիւնը կը ծրագրէ զրկել 200 Պուտտայի ուղանդէն միսիոնարներ Չինաստան, ժողովուրդը պուտտայականութեան դարձնելու 1937 Հոկ.էն իվեր անոնք սկսած են ծանր աշխատանքի մը չինարէնը սորվելու և այժմ պատրաստ են գործի լծուելու։

*. Քորեայի ճաքոնցի իշխանութեանց կողմէ կրօնական հալածանք մը կայ Երիցական միսիոնարութեան պատկանող Կ. Դպրոցներ գոցուած են։ Եկեղեցիներ հրահանգ ստացած են կառավարիչներէն որպէսզի քրիստոնեաներ եկեղեցի երթալէն առաջ ծռին «Արեւի Զատտուածուհիին» առջեւ։ Այն գիւղերը ուր սոյն չատուածու-

հոռոյն համար խորան չկայ, պէտք է կանգնել հառ մը, Անաստող քրիստոնեաներ կը հալածուին, կը բռնատարկուին, կը խոչտանգուին և մինչեւ իսկ անոթի ձգուելու սպառնալիքի կ'ենթարկուին։

*. Հրէական թերթ մը կը տեղեկագրէ թէ՝ Զմիւռնիոյ մէջ (Իզմիր) Սապպէթայ Զվի անուն հրեայ մը, Ժէ. դարուն մէջ ինքզինքը յայտարարեց իրր գալիք Մեսիան։ Այժմ ունի յաջող մը յանձին Սամփոն անուն հրեայի մը, որը եկած է Իզմիր, Դամասկոսէն։ Արդէն բաւական մեծ թիւով հետեւորդներ ունի, նախապաշարեալ տեղացի հրեաներէ բաղկացած, որոնք զինքը կը նկատեն սուրբ, և հրաշքներ կը վերագրեն իրեն։ Ինչ որ կ'սպասեն իզմիրցի հրեաներ սա՛ է թէ այս նորաբուսիկ Մեսիան հնչեցնէ փողը որպէս նշան մեսիական դարաշրջանին սկսած ըլլալուն։ ՄերՏէրը ըսաւ «Սուս Գրիստոսներ պիտի ելլեն» (Մատթ. 24:24)։

*. Յրանչիա Րիտլի Հովըրկալ Ժթ. դարու հոգիով լեցուած տաղանդաւոր կիներէն մէկը, համբաւը ունէր Ն. Կտակարանը, Սողոմոնները և Եսայիայ մարգարէութիւնները յիշողութենէն արտասանելու։ Նէ իր մըրցորդը ունեցաւ յանձին Տոքթ. Ու. Լ. Պէքըսթրի՝ որ մօտերս մեռաւ 96 տարեկան հասակին մէջ, որուն համար կ'ըսուի թէ ամբողջ Սբ. Գիրքը գոց գիտէր։ Ասիկա նախընթացը չունի Լուրի մը համաձայն, հակառակ իր տարիքին, մինչեւ վերջը կարող էր կրկնել յիշողութենէն որեւէ համար մը Սբ. Գիրքէն։

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

«Աւետարանի Զայնի», Ֆոնսին կը նուիրեն.—

Եղբ. Սեդրաք Դաւիթեան

100 Ե. Դ.

» Երուանդ Սարաֆեան

25 »

Բոյր Տէսփինէ Զօպանօղլու

20 »

Բոյր Շողակաթ Զպուգճեան 10 Ե. Դ. կը նուիրէ միեւնոյն նպատակին, փոխան շնորհաւորական հեռագրի, Սր. Վիքթորիա Դաւիթեանի ընդ Պր. Դրիգոր Թաշճեանի ամուսնութեան առթիւ։
Խմբագրութիւնս կը յայտնէ իր շնորհակալութիւնները յարգելի նուիրատուներուն։

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Փրկութիւն» հոգեւոր Ամսաթերթ

Խմբագիր՝ Վեր Վ. Պ. Թահմիզեան

Հասցէ՝ P. O. Box 2072

Ֆրէզնօ, Դալիֆորնիա

ՔԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Յգիպոս՝

25 Ե. Պ.

Ամերիկա՝

1¹/₂ տոլար

Ֆրանսա եւ Սիւրիա՝

30 ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական ունեւէ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն զեղչեալ գնով մը դրկիլ քերքը, երբ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալի միջոցաւ։

Ուշադրութիւն.— Բոլոր դրամական առաքումներ. յօդուածներ եւ բղբակցութիւնք պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen,

Shoubra, Cairo (Egypt):

PRINTED IN EGYPT BY

SAHAG MESROB PRESS,

25, SHARIA JEWFIK CAIRO.